Արձանագրություն 3

ՀՀ ԱՄԱՔ - ԳՀԱՇՁԲ -21/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Արարատ

16.07.2021թ.
Ժ. 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Մարտիրոսյան
Լ. Մարդոյան
Գ.Մարգարյան
Ն.Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Մելքոնյան

1. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ «USU Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.2. Հանձնաժողովի քարտուղարը մասնակցի գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) և գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրեց հանձնաժողովի անդամներին:
1.3. Մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի հայտնաբերվել:
Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել մասնակցի որակավորման գնահատման արդյունքը
«USU Գրուպ» ՍՊԸ՝ բավարար
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1. Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակից ճանաչել «USU Գրուպ» ՍՊԸ-ին՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

բ)ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

գ) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

3.1. ՀՀ ԱՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-21/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը 15:00-ին, հասցեն ք. Արարատ, Շահումյան 34:

- Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձ. նախագահ՝ _____ Մ.Մարտիրոսյան

Անդամներ՝ _____ Ա. Մարտիրոսյան

_____ Լ. Մարդոյան

_____ Գ.Մարգարյան

_____ Ն.Կարապետյան

Քարտուղար՝ _____ Կ. Մելքոնյան